ճնշող ուժը, կը տեսնես, նա ազատ էակ է: Շատ հարկաւոր չէ, ասում է Կարոն, որ մարդը հասկանայ թէ ի՞նչ բան է ազատութիւնը, որպէսզի ձգտումն ունենա դէպի նա: Որպէս կարող է մարդը չգիտենալ, թէ ի՞նչ նիւթ է օդը կամ որպիսի՛ քիմիական տարերքից բաղադրուած է նա եւ կամ ի՞նչ սնունդ է տալիս իր մարմնին, — բաւական է, որ նա գիտէ, երբ օդ չշնչէ, կը մեռնի: Ազատութիւնը, ասում է նա, մարդու հասարակական կեանքի մթնոլորտն է, որի մէջ զարգանում է նա, կատարելագործւում է եւ հասնում է իր մարդկային բարձր նշանակութեանը: Որքան ճնշուած, որքան սահմանափակուած լինի այս մթնոլորտը, այնքան մարդը անզօր, ծոյլ եւ բթամիտ կը մնայ: Ազատութիւնը մարդ սովորում է ազատութեան մէջ:

Ես մասամբ համաձայն եմ Կարոյի հետ, — առաջ տարաւ Ասլանը, — այո, ազատութեանը մարդ ընտելանում է ազատութեան մէջ: Բայց գլխաւոր բանն այն է, թէ ի՞նչ միջոցներով պէտք է տալ մի ճնշուած ժողովրդին ազատութիւն, երբ որ հազարաւոր զօրեղ ձեռքեր արգելք են լինում: Եւ ո՛վ պէտք է առաջնորդէ ժողովրդին դէպի ազատութիւն:

Մեր դրամատէրերն, որպէս դու տեսար, սկսած առաջին «ամիրայից» մինչեւ վերջին «քեռի Պետրոսը» աւազակներ են, ապրում են ժողովրդի արիւնով եւ քրտինքով: Մեր եկեղեցականները, սկսած պատրիարքից մինչեւ վերջին Կարապետ հայր սուրբը նոյնպէս աւազակներ են: Պատրիարքը իր առաքելական աթոռը գնում է սուլթանի բարձրագոյն դռնից կաշառքով. իսկ Կարապետ հայր սուրբն իր վանքի վանահայրութիւնը գնում է քուրդ իշխանից նոյնպէս կաշառքով: — Երկուսն էլ պէտք է կողոպտեն, կեղեքեն ժողովուրդը, որ կարողանան իրանց բռնապետական դիրքը պահպանել:

Մեզ պակաս է եւ հասարակական գլխաւոր զօրութիւնը, այն է թարմ եւ նորահաս երիտասարդութիւնը. դրանք կարող էին դպրոցների, գրականութեան եւ լրագրութեան միջոցով զարթեցնել եւ նախապատրաստել ժողովրդին: Բայց դժբախտաբար մենք երիտասարդութիւն չունենք. մենք ունենք Կ. Պոլսում մի քանի տգէտ եւ ամէն կրթութիւնից զուրկ «զեւզեկներ» միայն, որոնք ուրիշ ոչինչ չեն, եթէ ո՛չ շաղակրատ տիրացուներ: Էլ ո՞վ է մնում: — Մնում են մի քանի կարոներ, արդարեւ, ազնիւ եւ գործող անձինք, բայց մի ձեռքը ծափ կզարկէ՞...:

Այսոամենայնիւ, մենք բոլորովին յուսահատ չենք. մենք ունենք մի, թէեւ անմշակ, բայց մեծ զօրութիւն — ամբոխը, — դա բաւական է...:

Քեզ ցոյց տուած վիճակագրական թուանշաններից յայտնի է, թէեւ հայ ժողովուրդը Վանայ նահանգում թշնամու սրից, սովից, կրակից եւ բարբարոսական հարստահարութիւններից այժմ մեծ մասամբ սպառուել է, այսոամե-